ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 27- Ն

<< 14 >> հուլիսի 2017 թվական գյուղ Ձորակապ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապ համայնքի սեփականությանը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության 08-073-0037-0012 կադաստրային ծածկագրով 0.0072 հեկտար հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 07072017-08-0012, հասցեն՝ Ձորակապ համայնք, 1-ին փողոց, հողամաս՝ 52) օտարել աճուրդով՝ այդ հողամասում բնակելի օժանդակ շինություն կառուցելու համար:
2. Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Համայնքի ղեկավար Արամ Մարտիրոսյանին

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշման 1-ին կետում նշված հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԱՐԵՍՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ՝ կողմ _____

ՄԵԼԻՔՍԵԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ _____

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ՝ կողմ _____

ԱԼԲԵՐՏ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ _____

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ կողմ _____

ՁՈՐԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

<< 14 >> հուլիսի 2017 թվական
գ. Ձորակապ